

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----- 2016 թվականի N - Ն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՍԱՆԴՂԱԿԸ՝ ԸՍՏ ԵՐԵՒԱՅԻ ԿԱՐԻՔԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 1365-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N 46-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3.2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի ««Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1365 -Ն որոշման հավելվածի 9-րդ և 10-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<9. Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսավորումից բացի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար հատկացվում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ ըստ հետևյալ բանաձևի.

**Լմ=ՈւՕաՖ+ Ֆբչ**, որտեղ՝

Լմ -ն լրացուցիչ միջոցներ են,

ՈւՕաՖ - ն ուսուցչի օգնականների տարեկան աշխատավարձի ֆոնդն է,

Ֆբչ-ն ֆինանսավորման բարձրացված չափաքանակն է, որը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների աշխատավարձի տարեկան ֆոնդն է:

ՈւՕաՖ - ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$ՈւՕաՖ = ՈւՕթ \times Մա \times Աթ$ , որտեղ՝

ՈւՕթ-ուսուցչի օգնականների դրույքների թիվն է,

Մա - ուսուցչի օգնականների միջին ամսական աշխատավարձը,

Աթ.- հաշվարկվող ժամանակաշրջանի ամիսների թիվը:

10. Ուսուցչի օգնականների դրույքների թիվը որոշվում է՝

1) Ուսուցչի օգնական - ուսումնական հաստատության սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկից: 15 երեխայի համար սահմանվում է 1 ուսուցչի օգնականի դրույք, ընդ որում, դպրոցում երեխաների թիվը 7 և 7-ից պակաս լինելու դեպքում հաշվարկվում է 0,5 դրույք, իսկ 15-ից ավելի յուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար ավելացվում է ևս 0,5 դրույք: Ուսուցչի օգնականի միջին

ամսական աշխատավարձը հաշվարկվում է մանկավարժների միջին ամսական հաշվարկային աշխատավարձի 80 տոկոսի չափով»:

3. 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը հաստատելու մասին» N 46-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է՝

1) Սյունիքի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2017 թվականի հունվարի 1-ից,

2) Լոռու և Տավուշի մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2017 թվականի սեպտեմբերի 1-ից,

3) Արմավիրի մարզի և Երևան քաղաքի, ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2018 թվականի սեպտեմբերի 1-ից,

4) Արագածոտնի և Շիրակի մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2019 թվականի սեպտեմբերի 1-ից,

5) Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2020 թվականի սեպտեմբերի 1-ից,

6) Արարատի և Վայոց ձորի մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՍԱՆԴՂԱԿ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՍԱՀՄԱՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ՝  
ԸՍՏ ԵՐԵՒԱՅԻ ԿԱՐԻՔԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ

1. Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված բարձրացված չափաքանակով ֆինանսավորումը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի իրականացվում է Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով սահմանվող՝ «Հանրակրթական ուսուցում» և «Հանրակրթական ուսուցման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրերի միջոցների հաշվին՝ ըստ համապատասխան մակարդակների:

2. Սույն սանդղակով սահմանվում է Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար նախատեսվող լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի:

Ծանրության աստիճան	մանկավարժահոգեբանական աջակցություն մատուցող մանկավարժական դրույքների քանակը ըստ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թվի հաշվարկից			Ամիսների քանակ	Գործակից ըստ ֆունկցիաների խանգարումների աստիճանի	Ամսեկան աշխատավարձի չափ	Ֆինանսավորման բարձրացված չափաքանակ ըստ ֆունկցիաների խանգարումների աստիճանի
	մինչև 7-ը ներառյալ հոգի	8-ից 15	15-ից ավել ուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար լրացուցիչ				
	1	2	3	4	5=1x2x3x4		
Միջին	0.5	1	0.5	12	0.97	Հաշվետու տարվա պետական բյուջեով սահմանված մանկավարժական	
Ծանր	0.5	1	0.5	12	1		
Խորը	0.5	1	0.5	12	1.034		

						աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձ	
--	--	--	--	--	--	--	--

**ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).  
 «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է ներառական հանրակրթական ուսումնական հաստատություններին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական և աջակցող մանկավարժական ծառայությունների մատուցման համար նախատեսված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի և ուսուցչի օգնականի հաստիքների համընդհանուր ներառական կրթության իրականացման համատեքստում ներդրման պահանջներից:

**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.**

Նախագծով նախատեսվում է կանոնակարգել բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) նախատեսված լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակից օգտվող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և ուսուցչի օգնականի հաստիքի համար անհրաժեշտ ֆինանսավորման հետ կապված խնդիրները:

**Կարգավորման նպատակը և բնույթը.**

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, հաշվարկման կարգը հաստատելը,

**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցները:

**Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Ներառական հանրակրթական ուսումնական հաստատություններին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական և աջակցող մանկավարժական ծառայությունների մատուցման համար նախատեսված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի և ուսուցչի օգնականի հաստիքների համընդհանուր ներառական կրթության իրականացման համատեքստում ներդրում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման դեպքում ՀՀ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների ու նվազեցումների վերաբերյալ

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	2015 թվական		Հաջորդող 3 տարիները		
	Ըստ 2015 թվականի պետական բյուջեի	Փոփոխությունը 2015 թվականի պետական բյուջեի համեմատ	2016 թվական	2017 թվական	2018 թվական
			Փոփոխություն 2015 թվականի համեմատ	Փոփոխություն 2015 թվականի համեմատ	Փոփոխություն 2015 թվականի համեմատ
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ					
1.1 պետական բյուջեի եկամուտներ					
1.2 ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր			91871.2	157578.9	488318.1
2.1 պետական բյուջեի ծախսեր			91871.2	157578.9	488318.1
2.2 ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1 պետական բյուջե					
3.2 ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում	Հաշվարկները ներկայացվել են կից տեղեկանքով				
4.1 Եկամուտների գնահատում					
4.2 Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ					

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.

Սույն որոշումն ընդունվելուց հետո այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտություն չկա:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.

Համապատասխանում է:

3. Այլ տեղեկություններ.

Չկան:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 46-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ:

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2015-12.02 01/83-2/37856-15</p>	<p>1.Առաջարկում ենք Նախագծերում ավելացնել կետ՝ նշված նպատակներով անհրաժեշտ ծախսերի հատկացման հնարավորության հարցը յուրաքանչյուր տարվա ՀՀ</p>	<p>2ի ընդունվել</p>	

	<p>պետական բյուջեի նախագծի կազմման ժամանակ քննարկելու վերաբերյալ:</p> <p>2. Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետում առաջարկում ենք «Սյունիքի մարզերի» բառերը փոխարինել «Սյունիքի մարզի» բառով, իսկ «2016 թվականի հունվարի 1-ից» բառերը՝ «2016 թվականի սեպտեմբերի 1-ից» բառերով:</p> <p>3. Նախագծի տեղեկանքում նշված է, որ սույն որոշման ընդունմամբ ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ կառավարության 27.01.2011թ. «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձ-</p>	<p>2.Ընդունված է</p> <p>3.Ընդունված է</p>	<p>2.Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետում «Սյունիքի մարզերի» բառերը փոխարինվել է «Սյունիքի մարզի» բառով, իսկ «2016 թվականի հունվարի 1-ից» բառերը՝ «2016 թվականի սեպտեմբերի 1-ից» բառերով:</p> <p>3.Նախագծում սահմանվել են դրույթներ N46-Ն որոշման և N1365-Ն որոշման 9-րդ և 10-րդ կետերի ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ:</p>
--	---	---	---

նական կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշումը և 25.08.2005թ. «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N1365-Ն որոշման 9-րդ և 10-րդ կետերը, մինչդեռ Նախագծում բացակայում են N46-Ն որոշման և N1365-Ն որոշման 9-րդ և 10-րդ կետերի ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դրույթները:

4. Անհրաժեշտ է Նախագծի 1-ին կետով հաստատվող կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետում նշված «Հանրակրթական ուսուցում» բառերից հետո

4.Ընդունված է

4.Նախագծի 1-ին կետով հաստատվող կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետում նշված «Հանրակրթական



	<p>լրացնել «և «Հանրակրթական ուսուցման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» բառերը:</p> <p>5. Կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում «միջին տարեկան թվի» բառերից հետո առաջարկում ենք ավելացնել «(առանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների)» բառերը, նկատի ունենալով, որ նշված կետի 5-րդ ենթակետով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հաշվով նախատեսվում են մանկավարժահոգեբանակա ն աջակցության</p>	<p>5. Ընդունված է</p>	<p>ուսուցում» բառերից հետո լրացվել է «և «Հանրակրթական ուսուցման գծով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» բառերը:</p> <p>5. Կարգի 3-րդ կետի 2- րդ ենթակետում «միջին տարեկան թվի» բառերից հետո ավելացվել է «(առանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների)» բառերը, նկատի ունենալով, որ նշված կետի 5-րդ ենթակետով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների</p>
--	--	-----------------------	---

<p>« աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2015-11-12 ԱԱ/ԳԳ-2-5/10054-15</p> <p>« առողջապահության նախարարություն 2015-11-13 ԱՄ/05/13145-15</p> <p>« արդարադատության նախարարության 2015-12-23 01/14/15922-15</p>	<p>ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողներ, ուստի նշված սովորողների մասով ևս ուսուցչի օգնականի հաստիքների նախատեսումը, դրանց գործառույթների տեսանկյունից, հիմնավորման անհրաժեշտություն ունի:</p> <p>Առարկություն չկա</p> <p>1. նախագծի վերնագիրը չի համապատասխանում</p>	<p>1. Ընդունված է</p>	<p>հաշվով նախատեսվում են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողներ, ուստի նշված սովորողների մասով ևս ուսուցչի օգնականի հաստիքների նախատեսումը, դրանց գործառույթների տեսանկյունից, հիմնավորման անհրաժեշտություն ունի:</p> <p>1. նախագծի վերնագիրը համապատասխան</p>
---	---	-----------------------	---

	<p>«Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3.2 մասի դրույթներին: Այդ առումով նախագծի վերնագրում «կրթության կազմակերպման համար անհրաժեշտ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «համար սահմանված» բառերով, իսկ «ֆինանսավորման» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «բարձրացված» բառը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 1-ին կետին և այդ կետով հաստատվող կարգի վերնագրին:</p> <p>առաջարկում ենք, վերանայել ուսուցչի օգնականի հաստիքի ստեղծման նպատակահարմարությունը :</p>		<p>եցվել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3.2 մասի դրույթներին: Այդ առումով նախագծի վերնագրում «կրթության կազմակերպման համար անհրաժեշտ» բառերն անհրաժեշտ է փոխարինվել «համար սահմանված» բառերով, իսկ «ֆինանսավորման » բառից հետո լրացվել է «բարձրացված» բառը: Նույն դիտողությունը վերաբերել է նաև նախագծի 1-ին կետին և այդ կետով հաստատվող կարգի վերնագրին:</p>
--	--	--	---

<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն 2015-12-15 1/32.2/18405-15</p>		<p>Չի ընդունված</p>	
<p>ՀՀ կառավարություն 2016.04.11 02/14.1/4817-16</p>	<p>1. որոշման 3-րդ կետի նախաբանն՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին համապատասխան անհրաժեշտ է շարադրել հետևյալ կերպ՝</p> <p>«3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է՝»,</p> <p>2. որոշման 3-րդ կետի 1-6-րդ ենթակետերում «համար» բառերն անհրաժեշտ է փոխարինել «վրա» բառերով,</p>	<p>1. Ընդունված է</p> <p>2. Ընդունված է</p> <p>3. Ընդունված է</p>	<p>1. Կատարվել են համապատասխան փոփոխություններ Նախագծի կետում,</p>

	<p>3. որոշման հավելվածի 1-2-րդ կետերն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներին,</p> <p>4. որոշման հավելվածն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին,</p> <p>5.1. նախագծի փաթեթում ներառված ամփոփաթերթից անհասկանալի է արդյոք բոլոր շահագրգիռ մարմիններն են կարծիք ներկայացրել, թե ոչ: Նախագծի համաձայն ֆինանսավորման բարձրացված չափաքանակ սահմանվում է միայն ՊԵՏԱԿԱՆ ուսումնական հաստատությունների համար, մինչդեռ "Հանրակրթության մասին" "օրենքում նման սահմանափակում առկա չէ: Հարկ է նկատի ունենալ, որ նույն Օրենքի համաձայն ոչ պետական ուսումնական հաստատությունը պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պահանջներին և չափանիշներին համապատասխանելու դեպքում: Ուստի, կարծում</p>	<p>4. Ընդունված է</p> <p>5.1 Ընդունված չէ,</p>	<p>5.1 Համաձայն "Հանրակրթության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի՝ "3. Սովորողների ԱՆՎՃԱՐ հանրակրթությունն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետությունը ' ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության, հիմնադրում է ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպության կազմակերպական- իրավական ձևով (այսուհետ՝ պետական ուսումնական հաստատություն):": Պետական ուսումնական</p>
--	---	--	---

ենք, որ ֆինանսավորման բարձրացված չափաքանակ սահմանվելու հնարավարություն պետք է նախատեսել նաև ոչ պետական ուսումնական հաստատությունների համար, եթե վերջիններս համապատասխանում են ՀՀ կառավարության սահմանած պահանջներին և չափանիշներին:

հաստատություններ ն անվճար կրթությունն ապահովում են պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման եղանակով : Հետևաբար բարձրացված չափաքանակ կարող է կիրառվել միայն պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման դեպքում : Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը սահմանում է, որ ՀՀ կառավարությունը 'սահմանում է պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման ենթակա ոչ պետական ուսումնական հաստատությանը ներկայացվող պահանջները և չափանիշները': . Ոչ պետական ուսումնական հաստատությունները պետական բյուջեի միջոցներից չեն ֆինանսավորվում, քանի որ ՀՀ կառավարության կողմից համապատասխան չափանիշներ սահմանված չեն :

	<p>5.2. Բացի այդ, նշված օրենքում սահմանափակում չկա նաև հանրակրթական հիմնական ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ծրագրեր իրականացնող հաստատությունների մասով: Այսինքն, ըստ օրենքի հանրակրթական ուսումնական հաստատություններն իրականացնում են նաև հանրակրթական հիմնական ՀԱՏՈՒԿ ծրագրեր, ուստի պարզ չէ, թե նախագծում ֆինանսավորման բարձրացված չափանիշը ինչ հիմքով է նախատեսվում կիրառել միայն հանրակրթական հիմնական ԸՆԴՀԱՆՈՒՐ ծրագրեր իրականացնող հաստատությունների համար:</p> <p>5.3 Միաժամանակ հարկ է նկատի ունենալ, որ Օրենքի համաձայն Կառավարության որոշմամբ պետք է հաստատվի ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակ: Ներկայացված նախագծի վերնագրում ևս խոսքը գնում է համապատասխան ՍԱՆԴՂԱԿԻ հաստատման մասին, մինչդեռ ըստ էության նախագծով սահմանվում է լրացուցիչ ֆինանսական միջոցների տրամադրման հաշվարկման ԲԱՆԱՁԵՎ, այլ ոչ թե սանդղակ:</p> <p>Բացի այդ, կարծում եմ խմբագրական բնույթի</p>	<p>5.2 Ընդունված է</p> <p>5. 3 Ընդունված է</p>	
--	--	--	--

<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>խնդիր է առկա հավելվածի 3-րդ կետում, քանի որ այն ձևակերպված է որպես հանձնարարական:</p> <p>Նախագծի 3-րդ կետով տրվում է ֆինանսավորման բարձրացված չափաքանակի (Ֆբչ) սահմանումը, որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական և աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների աշխատավարձի տարեկան ֆոնդ: Միաժամանակ, Նախագծի հավելվածի 2-րդ կետում Ֆբչ-ն սահմանվում է որպես ՀՀ կառավարության 24.08.2006թ.-ի N1262-Ն որոշման համապատասխան ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ հրամանով (այսուհետ՝ Հրաման) հաստատված մեկ սովորողին ընկնող</p>	<p>Ընդունված է</p>	
-------------------------------------	--	--------------------	--



տարեկան գումարի և  
 ֆինանսավորման  
 բարձրացված  
 չափաքանակի գործակցի՝  
 ըստ ֆունկցիաների  
 խանգարման աստիճանի,  
 արտադրյալ: Նկատի  
 ունենալով նշվածը,  
 հայտնում ենք, որ  
 Նախագծից պարզ չէ Ֆբչ-ի  
 հաշվարկման կարգը՝  
 մասնավորապես,  
 պարզաբանման կարիք ունի  
 Ֆբչ-ի (մանկավարժական  
 աշխատողների  
 աշխատավարձի տարեկան  
 ֆոնդի) հաշվարկներում  
 Հրամանով սահմանվող մեկ  
 սովորողին ընկնող  
 տարեկան գումարի  
 կիրառումը, ինչպես նաև  
 հաշվարկում մեկ սովորողին  
 ընկնող տարեկան գումարի  
 նկատմամբ արդյո՞ք  
 կիրառվելու են Հրամանում  
 նշված լրացուցիչ  
 գործակիցները, թե ոչ:

1. Նախագծի 3-րդ  
 կետում, ՀՀ  
 կառավարության  
 25.08.2005 թվականի N  
 1365-Ն որոշման  
 հավելվածի 9-րդ կետի նոր  
 խմբագրության մեջ  
 «ՈՒՕաֆ - ուսուցչի  
 օգնականների թիվն է»  
 բառերն առաջարկում ենք

<p>Երևանի քաղաքապետարան</p>	<p>փոխարինել «ՈւՕաֆ - ուսուցչի օգնականների դրույքների թիվն է»:</p> <p>2.Նախագծի 3-րդ կետում, ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի N 1365-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի նոր խմբագրության մեջ «ուսուցչի օգնականների թիվը որոշվում է» բառերն առաջարկում ենք փոխարինել «ուսուցչի օգնականների դրույքների թիվը որոշվում է»:</p> <p>3.Նախագծի 3-րդ կետում, լրացուցիչ ֆինանսական միջոցներ հատկացնելու բանաձևում, ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի N 1365-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի նոր խմբագրության մեջ ուսուցչի օգնականների դրույքների թվի որոշման ժամանակ առաջնորդվել դպրոցում առկա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվով:</p>	<p>1.Ընդունված է</p> <p>2.Ընդունված է</p> <p>3 . 2ի ընդունվել</p>	<p>1.Նախագծի 3-րդ կետում, ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի N 1365-Ն որոշման հավելվածի 9-րդ կետի նոր խմբագրության մեջ «ՈւՕաֆ - ուսուցչի օգնականների թիվն է» բառերն փոխարինվել է «ՈւՕաֆ - ուսուցչի օգնականների դրույքների թիվն է» բառերով:</p> <p>2.Նախագծի 3-րդ կետում, ՀՀ կառավարության 25.08.2005 թվականի N 1365-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի նոր խմբագրության մեջ «ուսուցչի օգնականների թիվը որոշվում է» բառերն փոխարինվել է «ուսուցչի օգնականների դրույքների թիվը որոշվում է» բառերով:</p>
-----------------------------	--	---	--

	<p>4. Առաջարկվում է Նախագծի հավելվածի 2-րդ կետում ըստ ֆունկցիաների խանգարումների գործակիցներ չսահմանել հետևյալ հիմնավորումներով.</p>	<p>4. Չի ընդունվել</p>	<p>3. Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 3. Հոդված 21. Անցումային դրույթներ 1 կետ Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից .</p> <p>4. Հոդված 19. Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին և 3.2-րդ մասերով.  «3.1. Կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ.</p> <ol style="list-style-type: none"> <li>1) ձայնի և խոսքի.</li> <li>2) լսողական.</li> <li>3) տեսողական.</li> <li>4) ինտելեկտուալ</li> </ol>
--	--	------------------------	---

<p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p>	<p>5.Նախագծի ընդունուման դեպքում անհրաժեշտություն է առաջանում ՀՀ կառավարության որոշման 14.10.2016 թվականի N1391-Ն որոշման Հավելված N4-ի նույնականացում:</p> <p>1.Նախագծի հավելվածի 2-րդ կետում բերված սանդղակի 2-րդ սյունակում առաջարկում ենք «մանկավարժականների» բառը փոխարինել «մանկավարժական» բառով:</p> <p>1.Դպրոցների միջև ֆինանսական միջոցների հնարավոր բևեռացումները մեղմացնելու նպատակով առաջարկում ենք Նախագծով սահմանված բանաձևից հանել ուսուցչի օգնականների տարեկան աշխատավարձի ֆոնդը՝ ներառելով վերջինիս հետ կապված ծախսը ՀՀ կառավարության 2006</p>	<p>5. Ընդունված է</p> <p>1.Ընդունված է</p>	<p>(մտավոր) հետամնացություն ունեցող. 5) շարժողական: 3.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:</p> <p>5.Նշված հավելվածը լրամշակվել է և ներկայումս սահմանված կարգով շրջանառվում է:</p> <p>1. Նախագծի հավելվածի 2-րդ կետում բերված սանդղակի 2-րդ սյունակում «մանկավարժականների» բառը փոխարինվել է «մանկավարժական»</p>
-------------------------------------	---	--	--

<p>Երևանի բաղաքապետարան</p>	<p>թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ ՀՀ ֆինանսների ու ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ հրամանով հաստատվող ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի «հաստատության պահպանման ծախս» հաստատուն բաղադրիչի մեջ:</p>	<p>1. Չի ընդունվել</p>	<p>բառով:</p> <p>1. Հաշվի առնելով, որ « ուսուցչի օգնական» հաստիքը մանկավարժական հաստիք է, իսկ հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է 2 մասից՝ հաստատության պահպանման ծախսերից և ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից, ապա ուսուցչի օգնականների տարեկան աշխատավարձի ֆոնդի հետ կապված ծախսը չի կարող ներառվել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-</p>
---------------------------------	---	------------------------	---

	<p>2. Նախագծի լրամշակված տարբերակում, Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված առաջարկությունների 4-րդ կետը չի ընդունվել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3.2. կետի հիմնավորմամբ, այն է՝ ՀՀ կառավարությունը սահմանում է ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սակայն այն դպրոցներում որտեղ սովորելու են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներից միայն միջին ծանրության աշակերտներ, Նախագծի հավելվածի 2-րդ կետով սահմանված 97 տոկոս ֆինանսավորման պայմաններում հաստատությունները համապատասխան</p>	<p>2. Չի ընդունվել</p>	<p>Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված՝ ՀՀ ֆինանսների ու ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ հրամանով հաստատվող ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի «հաստատության պահպանման ծախս» հաստատուն բաղադրիչի մեջ:</p> <p>2. Նախագծի հավելվածի 2-րդ կետով սահմանված՝ ըստ ֆունկցիաների խանգարումների ծանրության աստիճանի գործակիցներ հաշվարկը կատարվել է՝ հաշվի առնելով մանկավարժահոգեբանական աջակցություն մատուցող մանկավարժական աշխատողների ծանրաբեռնվածություն</p>
--	--	------------------------	---

<p>1. ՀՀ ֆինանսների նախարարություն 01/83-2/25459-16 2016.11.12</p>	<p>մանկավարժների աշխատավարձերի գծով ծախսերն իրականացնելու են 100 տոկոսով:</p> <p>Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկում ենք վերանայել Նախագծի հավելվածի 2-րդ կետով սահմանված՝ ըստ ֆունկցիաների խանգարումների ծանրության աստիճանի գործակիցները՝ ծանրության միջին աստիճանի համար սահմանելով 1 գործակից</p> <p>1. Նախագծի 4-րդ կետով սահմանվում է համընդհանուր ներառական կրթության համակարգում մարզերի, Երևան քաղաքի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդգրկման ժամանակացույցը, առաջարկում ենք 2017 թվականի ընթացքում և հետագա տարիներին, մինչ ժամանակացույցում նշված ժամկետներում</p>	<p>1. Ընդունված է</p>	<p>նից՝ ելնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ծանրության աստիճանից:</p> <p>1. 2017 թվականի ընթացքում և հետագա տարիներին, մինչ ժամանակացույցում նշված ժամկետներում համընդհանուր ներառական կրթության անցումը, կբացառվի «Ներառական կրթություն» ծրագրում հանրակրթական ուսումնական</p>
--	--	-----------------------	---

<p>Երևանի քաղաքապետարան</p>	<p>համընդհանուր ներառական կրթության անցումը, զերծ մնալ «Ներառական կրթություն» ծրագրում հանրակրթական ուսումնական հաստատությունների թվի ավելացումից, նկատի ունենալով, որ նշված ավելացումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ծախսերի հատկացման անհրաժեշտության:</p> <p>1. Հաշվի առնելով, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակը նախատեսված է ֆունկցիաների միջին, ծանր և խորը խանգարումներ ունեցող երեխաների համար, ապա նախագծով նախատեսված լրացուցիչ ֆինանսավորման բանաձևում առաջարկում ենք ուսուցչի օգնականների դրույքների թվի որոշման ժամանակ առաջնորդվել</p>	<p>1.2ի ընդունվել</p>	<p>հաստատությունների թվի ավելացումը:</p>
-----------------------------	--	-----------------------	--



դպրոցում առկա կրթության  
առանձնահատուկ  
պայմանների կարիք  
ունեցող երեխաների թվով:  
2.Միաժամանակ, հաշվի  
առնելով, որ 01.12.2014  
թվականին ընդունված  
«Հանրակրթության մասին»  
օրենքում լրացումներ ու  
փոփոխություններ  
կատարելու մասին ՀՀ  
օրենքի 21-րդ հոդվածի 1-ին  
կետի 2-րդ ենթակետով  
ուսուցչի օգնականների  
հաստիքների թիվը  
սահմանվում է դպրոցում  
սովորողների միջին  
տարեկան թվի 10 տոկոսի  
հաշվարկով, ապա  
առաջարկում ենք  
տարանջատել  
հաստատության ընդհանուր  
և կրթության  
առանձնահատուկ  
պայմանների կարիք  
ունեցող երեխաներով  
պայմանավորված ուսուցչի  
օգնականների  
հաստիքները՝ վերջինիս  
հետ կապված ծախսերի  
տարբերությունը ներառելով  
ՀՀ կառավարության 2006  
թվականի օգոստոսի 24-ի  
թիվ 1262-Ն որոշման 1-ին և

2.Չի ընդունվել

2-րդ կետերով սահմանված՝  
«Ֆինանսների ու կրթության և գիտության նախարարների համատեղ հրամանով հաստատվող ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի «հաստատության պահպանման ծախս» հաստատուն բաղադրիչի մեջ:

1.Գրությամբ առաջարկվում է ուսուցչի օգնականների դրույքների թվի որոշման ժամանակ առաջնորդվել դպրոցում առկա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվով՝ նկատի ունենալով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3.1 մասով սահմանվող՝ լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակի նախատեսումը ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ

«Ֆինանսների նախարարություն»

1.Ընդունված է

ունեցող երեխաների  
 համար:  
 Այդ կապակցությամբ  
 հարկ է նշել, որ Նախագծի  
 1-ին կետով սահմանվող՝  
 ըստ երեխայի կարիքի  
 ծանրության աստիճանի՝  
 կրթության  
 առանձնահատուկ  
 պայմանների կարիք  
 ունեցող երեխաների համար  
 սահմանված  
 ֆինանսավորման  
 բարձրացված  
 չափաքանակի սանդղակով  
 արդեն իսկ հաշվարկվում է  
 մանկավարժահոգեբանակա  
 ն աջակցություն մատուցող  
 մանկավարժական  
 դրույքների քանակը՝ ելնելով  
 կրթության  
 առանձնահատուկ  
 պայմանների կարիք  
 ունեցող սովորողների միջին  
 տարեկան թվի հաշվարկից,  
 իսկ ուսուցչի օգնականների  
 դրույքների թիվը,  
 համաձայն 2014թ.  
 դեկտեմբերի 1-ին ՀՀ  
 Ազգային ժողովի կողմից  
 ընդունված  
 «Հանրակրթության մասին»  
 Հայաստանի  
 Հանրապետության

օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-200-Ն ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկից, որն էլ նախատեսվել է ՀՀ 2017թ. պետական բյուջեի հաշվարկներում:

Հետևաբար, վերոնշյալ առաջարկությունը չի բխում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքից:

2. Գրությամբ առաջարկվում է նաև տարանջատել հաստատության ընդհանուր և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներով պայմանավորված ուսուցչի օգնականների հաստիքները՝ վերջինիս հետ կապված ծախսերի տարբերությունը ներառելով ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների համատեղ

	<p>հրամանով հաստատվող ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի «հաստատության պահպանման ծախս» հաստատուն բաղադրիչի մեջ, որի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.</p> <p>Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ուսուցչի օգնականների դրույքները դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի սահմաններում սահմանվում են ըստ միջակայքերի (Նախագծով մինչև 7 երեխայի դեպքում նախատեսվում է ուսուցչի օգնականի 0,5 դրույք, 8-15 երեխայի դեպքում՝ 1 դրույք, 15-ից ավելի յուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար ավելացվում է ևս 0,5 դրույք), հետևաբար, այդ դրույքների գծով հաշվարկված ծախսը փոփոխուն ծախս է և այն չի կարող ներառվել «հաստատության պահպանման ծախս» հաստատուն բաղադրիչում:</p>	<p>2.Ոնդունված է</p>	
--	--	----------------------	--

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՍԱՀՄԱՆՎԱԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՍԱՆԴՂԱԿԸ՝ ԸՍՏ  
ԵՐԵԽԱՅԻ ԿԱՐԻՔԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ, ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի  
N 46-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի N 1365 –Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՒԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի հաշվարկման» սույն նախագծով նախատեսվում է կանոնակարգել բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) նախատեսված լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակից օգտվող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և ուսուցչի օգնականի հաստիքի համար անհրաժեշտ ֆինանսավորման հետ կապված խնդիրները: Կառավարության սույն որոշման նախագիծը հիմնված է վերոնշյալ օրենքով սահմանված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսումնական և մանկավարժահոգեբանական ծառայությունների համար ֆինանսավորման սկզբունքների վրա:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն)՝

- 1) Հոդված 3-ի 10.7 կետով սահմանվել է «ֆինանսավորման բարձրացված չափաքանակ» հասկացությունը, որը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափն է, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար.
- 2) Հոդված 35-ի 3.1. և 3.2 կետերի համաձայն «Կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով օգտվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն երեխաները, որոնք ունեն հետևյալ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ.

- 1) ծայնի և խոսքի.
- 2) լսողական.
- 3) տեսողական.
- 4) ինտելեկտուալ (մտավոր) հետամնացություն ունեցող.
- 5) շարժողական:

3.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Հանրակրթության համակարգում համընդհանուր ներառական կրթության անցման գործընթացի հիմքում ընկած է «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը հաստատելու մասին» 27.01. 2011 թ. N 46-Ն որոշումը, որով կանոնակարգվել են ներառական կրթության կազմակերպման գործընթացն իրականացնող հատուկ մանկավարժների (ուսուցչի օգնականների) դրույքների և միջին ամսական աշխատավարձերի ձևավորման սկզբունքները: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգի ներդրման չորս տարիների փորձը ցույց է տվել, որ հատուկ մանկավարժների և ուսուցչի օգնականների ինստիտուտները ֆինանսական ծախսերի տեսանկյունից խնդիրներ չեն առաջացրել: Այդ իսկ պատճառով ՀՀ ամբողջ տարածքում համընդհանուր ներառման անցման ֆինանսական ծախսերի պլանավորման մեթոդաբանության հիմքում դրվել է Տավուշի մարզի փորձը և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) սահմանված մոտեցումները:

Սույն օրենքի 3-րդ հոդվածի 10.3 և 10.4 կետերով սահմանված «ներառական կրթություն» և «մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» հասկացությունների բովանդակությանը համապատասխան ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ ունեցող երեխաների բարձրացված չափաքանակը պետք է ուղղվի հաստատության բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների դրույքների սպասարկմանը: Քանի որ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ ունեցող երեխաների թիվը պետք է հստակեցվի մանկավարժահոգեբանական գնահատման նոր՝ ֆունկցիաների միջազգային դասակարգման գործիքակազմով, ապա առայժմ նշված խմբերին պատկանող սովորողների թվային ճշգրիտ, անգամ մոտավոր պատկերը դեռևս հստակ չէ: Այն հետագայում կհստակեցվի Մանկավարժահոգեբանական գնահատման տարածքային կենտրոնների և հանրապետական կենտրոնի կողմից, արդեն իսկ գնահատված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների վերագնահատման և համընդհանուր ներառական կրթության աշխարհագրության ընլայնմանը զուգընթաց նոր հայտնաբերված երեխաների գնահատման արդյունքում:

Ըստ սույն նախագծի, տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ֆինանսավորման բարձրացված չափաքանակի հանրագումարը հաշվարկվում է օրենքով սահմանված ֆունկցիաների միջին, ծանր, խորը խանգարումներ ունեցող սովորողների համար համապատասխան գործակիցների կիրառմամբ և կախված է տվյալ հաստատությունում այս խմբի սովորողների ընդհանուր թվից: Վերջինս կարևորվում է տվյալ հաստատությունում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցող

մանկավարժական աշխատողների դրույքների հաշվարկման տեսանկյունից: Ներկայումս գործող կարգով հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդգրկված է ֆինանսավորման բարձրացված չափականակով ֆինանսավորում ստացող ճանաչված և սահմանված կարգով վկայագրված 3457 սովորող, որոնց կրթության ապահովման համար անհրաժեշտ կլինի շուրջ 700մլն դրամ՝ 124 հանրակրթական դպրոցի հաշվով ֆինանսական միջոցներ:

Աղյուսակ 1

<b>Ներառական կրթություն ստացող աշակերտների թվաքանակը և ներառական կրթությանը հատկացվող գումարի չափը 2015թ., հազ. դրամ</b>										
Ուսումնական հաստատություններ ըստ ենթակայության	Տարրական		Հիմնական		Միջնակարգ		Ընդհ. հանրակրթ. դպր.թիվ	Ներառ. դպր. թիվ	Ընդամենը /աշ. թիվ/	Ընդամենը
	Աշ. թիվ	Գումար	Աշակ. թիվ	Գումար	Աշակ. թիվ	Գումար				
ՀՀ ԿԳՆ	63	36446.7	286	165456.4	162	93720.0	123	22	511	295623.1
ք. Երևան	807	495820.7	783	481273.9		204.9	156	44	1590	977299.5
ՀՀ Արագածոտնի մարզպետարան	12	9269.3	1	501.0	-		118	1	13	9770.3
ՀՀ Արարատի մարզպետարան	33	21862.9	33	21862.9	2	1325.0	107	3	68	45050.8
ՀՀ Արմավիրի մարզպետարան	76	45975.8	59	35691.7			112	4	135	81667.5
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	50	32190.9	48	30903.3	3	1931.5	117	6	101	65025.7
ՀՀ Լոռու մարզպետարան	134	102387.6	193	147468.8	11	8405.0	150	12	338	258261.4
ՀՀ Կոտայքի մարզպետարան	33	20117.4	48	29261.7	1	609.6	90	4	82	49988.7
ՀՀ Շիրակի մարզպետարան	160	93802.4	212	124288.2	2	1172.5	148	12	374	219263.1
ՀՀ Սյունիքի մարզպետարան	78	48765.3	88	55017.3	3	1875.6	112	11	169	105658.2
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	44	31542.2	32	22939.8	-	-	48	5	76	54482.0
ՀՀ Տավուշի մարզ	-	-	-	-	-	-	77	-	-	-
Ընդամենը	1490	938181.2	1783	114665.0	184	109244.1	1358	124	3457	2162090.3

Միաժամանակ, նախատեսվում է բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում, Տավուշի մարզի օրինակով, ներդնել ուսուցչի օգնականի հաստիքներ:

Ուսուցչի օգնականի աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում դրվում է «Ներառական կրթություն» ծրագրով՝ ըստ մարզերի հատկացված բյուջետային միջոցները, որոնք պետք է լրացվեն



պետրյուջեից հատկացված լրացուցիչ ֆինանսական միջոցներից՝ ըստ տվյալ մարզում (Երևան քաղաքում) համընդհանուր ներառման ժամանակացույցով սահմանված ֆինանսավորման վերոնշյալ նախագծի ուժի մեջ մտնելու պահից:

ՀՀ	Մարզ	Սովորողների քանակի 10%-ը	Ուսուցչի օգնականի Հաստիքների թիվը	Աշխատավարձի տարեկան ֆոնդը
1	Շիրակ	2477.1	197	287684
2	Լոռի	2486.40	201	292795
3	Տավուշ	1467.50	113	165017
4	Գեղարքունիք	2679.60	199	290604
5	Սյունիք	1384.70	122	177429
6	Արարատ	3052.00	224	326382
7	Արմավիր	3049	220	321221
8	Վայոց Ձոր	563.60	50	73016
9	Արագածոտն	1662	137	200064
10	Կոտայք	2847.1	203	296446
		21669.1	1664	2430658

Սույն նախագծով ուսուցչի օգնականի հաստիքների թիվը և աշխատավարձի տարեկան ֆոնդը հաշվարկվել է 2015թ. պետական բյուջեի «Ներառական կրթություն» ծրագրի

Ընդամենը ՀՀ՝ առանց ԿԳՆ հանր. դպրոցների	30165	2252	3289002
	ԿԳՆ	4313	312
Ընդամենը ՀՀ	34478	2564	3743893

ֆինանսական փաստացի ծախսերի հաշվառմամբ (պետք է նկատի ունենալ, որ այս ծրագրով 2015թ. պլանավորված ցուցանիշերը աննշան փոփոխություն են կրել), ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի համայնքների (աղյուսակներ 2,3):

ՀՀ մարզերի համար հաշվարկված ուսուցչի օգնականի աշխատավարձի տարեկան ֆոնդը, հազ. դրամ<sup>1</sup>

Աղյուսակ 2

Ուսուցչի օգնականի աշխատավարձի տարեկան աշխատավարձի ֆոնդի հաշվարկի հիմքում դրվել է Տավուշ մարզում փորձարկվող մեթոդաբանությունը, ինչը արտացոլված է նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն) 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

սահմանված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից»:

Աղյուսակ 3

Երևան քաղաքի համար հաշվարկված ուսուցչի օգնականի աշխատավաճի տարեկան ֆոնդը, հազ. դրամ<sup>2</sup>

ՀՀ	Համայնք	Սովորողների քանակի 10%-ը	Ուսուցչի օգնականի Հաստիքների թիվը	Աշխատավարձի տարեկան ֆոնդը
1	Կենտրոն	1258	87	127048
2	Էրեբունի	939	68	98572
3	Արաբկիր	900	63	92000
4	Նորք-Մարաշ	45	4	5841
5	Դավթաշեն	281	19	27746
6	Նուբարաշեն	142	10	13873
7	Աջափնյակ	796	56	81778
8	Շենգավիթ	1128	78	113905
9	Մալաթի -Սեբաստիա	1199	81	118651
10	Քանաքեռ-Զեյթուն	484	33	47461
11	Ավան	404	27	39468
12	Նոր -Նորք	920	63	92000
	Ընդամենը	8496	589	858344.4

Այն սույն տեղեկանքում ներկայացված է Աղյուսակներ 2, 3-ում տրված ուսուցչի օգնականի աշխատավարձի տարեկան ֆոնդի հաշվարկը: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) սահմանված կարգով ուսուցչի օգնականի հաստիքների ներդրումը առաջ կբերի ՀՀ պետությունից վրա ներկա ցուցանիշների հաշվառմամբ մոտ 1,7 մլրդ դրամի ծախսի ավելացում:

Միաժամանակ, Աղյուսակներ 2-ի և 3-ի հաշվարկի հիմքում դրվել է Տավուշի մարզում ներդրված ուսուցչի օգնականի դրույքների (հաստիքների) հետևյալ հաշվարկը՝ կախված հանրակրթական

<sup>1</sup> ՀՀ մարզերի ցուցանիշների մեջ չեն ներառված մարզերում գործող ՀՀ ԿԳՆ ենթակայության հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալները:

<sup>2</sup> Երևան քաղաքի ցուցանիշների մեջ չեն ներառված ՀՀ ԿԳՆ ենթակայության հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալները:

ուսումնական հաստատության աշակերտների ընդհանուր թվից որոշվում է հետևյալ կերպ. ուսուցչի օգնականների թիվը որոշվում է՝ դպրոցի սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկից, այսինքն, 15 երեխայի համար 1 ուսուցչի օգնականի դրույք, ընդ որում, դպրոցում երեխաների թիվը 7-ից պակաս լինելու դեպքում հաշվարկվում է 0,5 դրույք, իսկ 15-ից ավելի յուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար ավելացվում է ևս 0,5 դրույք:

Արդյունքում, վերաբաշխելով <<Ներառական կրթություն>> ծրագրով ներկայումս ֆինանսավորվող հանրակրթական ուսումնական հաստատություններին հատկացված ֆինանսավորումը (Աղյուսակ 1) և ավելացնելով ներառական հանրակրթական ուսումնական հաստատություններին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթական և աջակցող մանկավարժական ծառայությունների մատուցման համար նախատեսված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի և ուսուցչի օգնականի հաստիքների համընդհանուր ներառական կրթության իրականացման համատեքստում ներդրման համար անհրաժեշտ ծախսերը, ՀՀ պետական բյուջեի «Հանրակրթական ուսուցում» ծրագրի շուրջ 3 մլրդ դրամով ավելացման համապատասխան ծախսերը: Դրանք կպահանջվեն համընդհանուր ներառման անցման ժամանակացույցին համապատասխան՝ 7 տարվա ընթացքում (մինչև 2022թ. ներառյալ):

Սույն կառավարության որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը հաստատելու մասին» 27 հունվարի 2011 թվականի N 46-Ն որոշումը և «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 25 օգոստոսի 2005 թվականի N 1365-Ն որոշումն 9-րդ և 10-րդ կետերը:

Համընդհանուր ներառական կրթության անցման գործընթացի ավարտին նախատեսվում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատության կարգավիճակում թողնել շուրջ 6 հաստատությունների: Ուստի նրանց ֆինանսավորման գործընթացները կանոնակարգելու նպատակով անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատել «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորման կարգ»: